



41. ՎԱՍՎԱՍԱ ՄԽՈՆ

Մխո անունով մարդ մե կէղնի, ըդրա օղորդ անուն կը մոռնան, կը դնին Վասվասա: Էդ շատ մոռտալ, խոսք տանոր-բերող, խային մեկ կէղնի, տներ ու չողեք կէրթեր, անկաշ կը դնեն՝ ո՞ն է ճճդս՝ կը քֆրե սուլթանին ու վալուն, մթասարըֆին ու խայմախամին, կը լսեր, վաղեր հուքմաթ:

— Աֆանդի՛, ֆլան մարդ կը քֆրեր սուլթանին, ֆլան մարդ՝ վալուն:

Աֆանդուն գաթի հմալ մեկմ՝ էր պետք. ձեռաց մեկին կը թալին բոնատուն, մեկելին կը քշին սուրգուն: Ասու իրան օր՝ մարդ կը բովեր, կը ծեծվեր, կէրթեր ի սուրդուն, գեղացիք շայիշ չըն էնի՝ ո՞ն խոսք տեղ կը հասու, զմարդոց տներ կը քանդե:

— Զա՛նըմ,— կըսին,— էդ ո՞ն լսեց, ո՞ն գնաց դանկաշ կաթըցուց, օր մեկին թալին բոնատուն, մեկելին քշին սուրգուն:

Հա է՛ս կէղնի, էն չէղնի, հա՛ էն չէղնի, էս կէղնի, հմա գիկան կը կանին վըր Մխոն, վըր էդ Վասվասին ու ինոր յառեջ ձեն ուրանց կը թալին ի փոր: Է՛, մըշ ախշըրին բա՞ն կը մնա ծածկուկ, օր մե չէ օր մե՛ լուսի պես բելու կէղնի, օր Վասվասեն Մխոն է ու Մխո՞ն, քանիմ՝ հոգի կը ժողվին, ուրանց միշեն շարաղե մե կը շոկին՝ դողխուլախ էնե, գա ուրանց ըսե: Իգա շարագեն գողխուլախ կէնե, կը տեսնա՝ հանդե Մխոն, իմալ օձ, ուր կուշտ ու բոլոր իշկելով՝ ուրին կը թալե հուքմաթ:

— Ը՛հը, վոլա, գտա՛, հմա ի՞մալ իսպաթ էնիմ:

Դառնա գիկա մըտ չընկերտանց. կը թալին-բռնին, վեռչ ընոն-ցից մեկ կըսե.

— Թե գուղիք իսպաթ էնինք, զավթիաներուց մեկին կանչին օր աղեկ մե ուղի խմցունք, չըմեն բան չիմնանք:

Սարխոշ, խելառն ու էրեխեն մեկ ին. ի՞նչ կըսիք:

— Վոլա հմա՛լ է, կըսին չընկերտանք:

Հմալ լե կէնին. զավթիաներուց մեկին աղեկ մե կը խմցուն. զհոգին կը գողնան, չըմեն բան գիմնան, օր խոսք տանող-բերող Մխոն է ու Մխոն, ու եր ըգրան կը տեսնան դիկա մտնա տուն յա յօղեն, մարդիկ ղուրանց խոսք կը փոխին՝ խայմախամ կը դառնա խիար, վալին՝ ձմերուկ:

Ժամանակ մե գընցնա, Վասվասեն կը դառնա գեղի ոես, յանի թե՛ մարդոց յոտ ու ձեռք կապին, գել թողին մըջ ուրանց: Խամչին ի ձեռ՝ մեկին հմալ կը ծեծե, օր օխչըրի փոստ կը քաշին վրեն, էն մեկելին նահախ տեղ կը քշե սուրգուն, մեծ-մեծ կաշառներ կառնե, խուլասա՛ էն խըդար կը հարուստնա, օր չէղած: Ուրին չը սիրող ղուշման մարդոց՝ խամչի է, օր կը շըբփցու, մեկելներուն կը կանչե, կանգըցու ուր յառեջ, կը բոռա.

— Շունշանորդի՛, դու ֆլան օր յորի՞ն կը քֆրեր վալուն:

— Ես չըմ քֆրերի. վալին յո՛ւր, ես յո՛ւր,— կըսե խեղճ մարդ:

— Զէ՛, քֆրեր ու քֆրեր իս. իդա խըդար փարա բի՛, թե չէ՛ էր-թալ կա, դառնալ չկա:

Կը կանչե ուրիշի մե.

— Դու քա՞նի գլխանի իս, օր թագավորի վերկին չի տաս:

— Զունիմ, յո՛ւստ տամ:

— Գնա պարտք-պուրտք էրե, բի՛, թե չէ՛ էրթալ կա, դառնալ չկա:

Կը կանչե ֆախիր-ֆուխարիմ՝ լե.

— Վերկին տվի՞ր իս:

— Իե՛ս, ցանք չէղի, քաղ չէղի, դո՛ւ ըսե, ի՞մալ տամ:

Օլոր օր՝ զավթիեք գիկան, ըղոց հախ ու հաշիվ կը տեսնան. թորկին կէրթան:

Դանակ օսկոռին կը հասնի, գեղացիք գանգատ կը ճամպին Ստամբոլ, թե հմլա-հմլա բա՛ն. գանգատ կէրթա հասնի, կը՛ զվոնե, յետ գիկա խայմախամին, յոնի ըռհաթ կը պարկի: Դե՛, գանգրավորներ, գացեք ձեր գլխու ճարն էրեք: Վասվասեն կը կանչե դանգըտվորներու մեծերուն, կը ծեծե, թալե բռնատուն, կը քշե սուրգուն, շատերուց լե փարա կը գուպե, նոր կըռհաթի:

Ախշար օր նարդիվան չէզնեւ, մարդ ի՞նչ կէղնեւ, յարօր վերև իս, վաղ գիջնաս ներքև, ներքև իս, գելնաս վերև: Վախտ մե դընց-նա՝ Վասվասեն կը տեսնա՝ օր մե ուր գլուխ կուտին, դաթի ուր էրածն էրեր է, գելնա կէրթա Թիֆլիս: Կէրթա Թիֆլիս, հմա ուր գեղացի խարիր-խուրպըթներ նա՝ յերես կիշկին, նա՝ նստին-կանին հետ, չըմքի լսե՛ր ին՝ թե ի՞նչ շունշանորդի է: Վասվասեն չըմեն տեղ վասվասա է, գուզե էրկինք բանձրնա:

Թիֆլիս խարիր-խուրպաթ չըհել տղե մե կէղնի, փախեր էր, օր թուրքի ասկար չէրթեր, վախտին՝ Վասվասեն ըդոր անմեղ պապուն ճամպած կէղնի սուրգուն: Մարդ կէրթա, չը դառնա: Իդա չըհել տղեն գիկա տեսնա, օր հանդե Վասվասեն էրկրի շորեր թալի, հագուկ է իմալ պարոն, պիտեր ուրին խը՛շտ, նստեր է մըջ խաչվախանին՝ խավա-չաչ կը խմե, էրկրից կը խոսա, ուր աղեկութեն-չաղեկութենից կը զրուցե, հմալ քաղցր ու ճարտար, կըսիս շասիկս/հանիմ տամ ըդոր, հմա ո՞ն կավանա: Օր գելնա էրթա՝ յետեւն կըսին.

— Շունշանորդին աղեկ կը հաջա, տեսնաս յորի՞ն է էկի յողա: Դառնանք մեր խարիր չըհելին: Ջըհելսի օր կը տեսնա ուր սպապուն սուրգուն քշողին՝ օր մե ուր շատ սրտամոտ չընկերոջ կըսե.

— Վո՛ւա ես էդ գաղտագելին պտի սպանիմ:

— Ի՞մալ, — կը հարցու չընկեր:

— Սպանել ի՞մալ կէղնի: Էնի իմ խեղճ ու կրակ պապուն սուրգուն ճամպե՛, յիզա ուրին ըռհաթ նստի Թիֆլի՛ս, ուտե-խմե՛, մեծ-մեծ բրդե՛, ծիծղա վըր անմեղ մեռելներո՞ւն. էդի չէղած բան է. ես իմ հըվետ պտի հանիմ, թե չը հանիմ՝ շուն է ցուտի զիսի:

Հա՛, մեռնիմ չըհել խարիր-խուրպըթի ձեռներուն, քանիմ՝ օր յետև մըջ Թիֆլիսա կը ձենձնվի, թե ֆլան մարդ սպաներ է զՎասվասեն: Հմալ ընդոր վերջ էղավ. ու շուրի մկա լե մըջ ապրողներուն, օր խոսք կը բացվի վըր Վասվասին՝ չըն դի՛նա ո՞ն սպանեց զէնի. օրշնեթք կիտան տղին, օր ախշըրեն հմալ շուն մե պակըսցուց:

